Վարդապետը բացատրեց պատգամախօսի գուշակութիւններն այսպէս.

— «Ուրախացի՛ր»... վերջն էլի լաւ եկաւ, վերջն ուրախութիւն է:

Եւ նոյն րոպէում աբեղայի խորամանկ դէմքի վրայ երեւաց մի կեղծ ժպիտ: Նա շարունակեց.

— «Ալաք, բալաքէ նշանակում է գոյնզգոյն կամ զոլ — զոլ, այսինքն՝ կերպաս, աբրեշումի կերպաս, եզերքը զառով զարդարած: Դա տաճարի վարագոյրն է: «աղան» պահանջում է ձեզանից, — աբեղան դարձաւ դէպի մշեցի Գրիգորը: — Դուք սյսուհետեւ կուրախանաք, ձեր խնդիրքը կը կատարոի: «Աղայի» տաճարի վարագոյրը հնացել է:

Գուշակութիւնները մինը միւսի ետեւից շարունակւում էին: Զարմանալին այն էր, որ «աղանէ իր պատգամախօսի բերանով կոչում էր ամէն երկրից եկած նշանաւոր եւ հարուստ ուխտաւորներին: Իսկ նրանք խորին երկիւղածութեամբ լսում էին իրանց դատավճիռը:

Յետոյ գուշակողը ընկնում է բոլորովին ուշագնացութեան մէջ: Վարդապետները տանում են նրան, հաւատացնելով, թէ նոյն դրութեան մէջ նա կը մնայ մի քարայրի մէջ մինչեւ վանքի գալոց տօնախմբութեան օրը :

— Խե՛ղճ, — ասաց Մարօն, — ինչպէ՛ս պէտք է մնայ այնտեղ, բա չի՞ մեռնի: Ֆարհատ, ես կ'ուզէի, որ «ընկաւորը» մի բան էլ ինձ համար ասէր: Դու չե՞ս հաւատում:

— Հաւատում եմ, — պատասխանեցի ես:

Իրաւ որ, հաւատում էի: Իսկ եթէ Մարօն ա՛յժմ հարցնէր ինձանից, նրան կ'ասէի՝ այն ժամանակ, երբ մարդիկ կուռք էին պաշտում, Պիւթիաս քրմուհին, իր եռոտանիի վրայ կանգնած, այսպիսի պատգամներ էր կարդում: Դա եւս Հայաստանի հեթանոսական դարերից մնացած հին սովորութիւն է: Մենք անցանք եկեղեցական մարգարէութիւնից դէպի ժողովրդական մարգարէութիւնը:

Հեռու, մի քարաժայռի վրայ, նստած էր փոքրիկ աղջիկ: Նրա նիհար եւ բարակ երեսը, օծուած ընկոյզի իւղով, փայլում էր ջահի լուսով, որ վառւում էր նրա մօտ: Նա հագած ունէր մի տեսակ խայտաճամուկ եւ կախարդական զգեստ: Մանուկ օրիորդների բազմութիւնը շրջապատել էր նրան: Նա նոյնպէս գուշակում էր:

Մենք մօտեցանք:

— Դա այն աղջիկն է, — ասաց Մարօն: